Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 22 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի վերջնական կահավորում» և «Հեռուստամարաթոն - 2012» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գրքերի տպագրման» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երևանի Քանաքեռ-զեյթուն վարչական շրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջաններում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի և Հովուվի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգում» ծրագրերը.

«Խաչվող ուղիներ» սոցիալական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախակըրթական ծրագիր «Ալվան ծաղիկ» Լոռու մարզի Վանաձոր, Քարինջ և Դեբեդ համայնքների համար» ծրագիրը.

«Սեյվ Դը Չիլդրեն Ֆեդերեյնշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետթույունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիրը.

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում) և 2012 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բուժական օգնություն ծրագրերը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: